«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 3

30 ապրիլի 2019 թվականի

«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը Եղեգնաձորի մասնաճյուղում» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը Եղեգնաձորի մասնաճյուղում»** հարցը (զեկուցող՝ Եղեգնաձորի մասնաճյուղի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Ե.Հովակիմյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. 2018-2019 թթ. մասնաճյուղում իրականացվել են ուսումնագիտական, կրթական, կազմակերպական, մեթոդական, կրթության որակի ապահովման ու հանրային բնույթի աշխատանքներ, որոնց նպատակն է եղել ապահովել մասնաճյուղի բնականոն գործունեությունը և նպաստել կրթական ու գիտական համակարգերի արդյունավետության բարձրացմանը:

Մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով ուսումնական գործընթացը կազմակերպվել է «Կառավարում (ըստ ոլորտի)» և «Ֆինանսներ (ըստ ոլորտի)», իսկ մագիստրոսի կրթական ծրագրով՝ «Գործարար վարչարարություն» մասնագիտություններով՝ ՀՊՏՀ-ում կիրառվող չափանիշներին, չափորոշիչներին ու կրթական համակարգի մյուս բաղադրիչներին համապատասխան:

2018-2019 ուսումնական տարում բուհն ավարտում է առկա ուսուցման բակալավրիատի կրթական ծրագրով 28, հեռակա ուսուցման բակալավրիատի կրթական ծրագրով 18, իսկ առկա ուսուցման մագիստրատուրայի կրթական ծրագրով 12 շրջանավարտներ (ընդամենը՝ 58): Ընդհանուր առմամբ, բուհն ավարտողների և ընդունվողների դինամիկան դրական է հեռակա ուսուցման բակալավրիատում (ավարտում են 18, ընդունվել են 25 ուսանողներ) և առկա ուսուցման մագիստրատուրայում (ավարտում են 12, ընդունվել են 18 ուսանողներ), իսկ առկա ուսուցման բակալավրիատում նկատվում է բուհ ընդունվող ուսանողների քանակի նվազում (ավարտում են 28, ընդունվել են 9 ուսանողներ):

Ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակի ամփոփիչ քննաշրջանի արդյունքներով ուսման առաջադիմությունը մասնաճյուղում կազմել է. առկա ուսուցման բակալավրիատում՝ 92,72%, առկա ուսուցման մագիստրատուրայում՝ 91.76%, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 71.71%:

Մասնաճյուղի գործունեության 2018-2019 ուսումնական տարվա առանձնահատկություններից է եղել այն, որ կարևոր տեղ է հատկացվել հեռահաղորդակցման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը և կրթական գործընթացում դրանց միջոցով ուսուցման կազմակերպմանը: Մասնաճյուղում տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտի զարգացման համար հուշագիր է ստորագրվել Վայոց ձորի մարզպետարանի, «Գյումրու տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» գիտակրթական հիմնադրամի միջև, ինչի արդյունքում մասնաճյուղի դասախոսներին, ուսանողներին և շրջանավարտներին հնարավորություն է ընձեռվել մասնակցել հիմնադրամի կողմից կազմակերպված դասընթացներին, վերապատրաստվել և բարելավել իրենց գիտելիքները: Կարևորվել է նաև մասնաճյուղի միջազգայնացմանն ուղղված գործողությունների իրականացումը, որոնց շրջանակներում գործընկերություն է հաստատվել և ծրագրեր են իրականացվել մի շարք միջազգային կառույցների հետ:

Մասնաճյուղի գործունեության մեջ կարևորվել է ուսանողների մարզամշակութային, ժամանցային ու հանրային օրակարգի կազմակերպումը, որոնց նպաստել են մարզային կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների և մարզում գործող հասարակական ու երիտասարդական կազմակերպությունների հետ մասնաճյուղում հաճախակի կազմակերպվող սեմինարները և քննարկումները:

Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղի հիմնադրման 11-ամյակի կապակցությամբ կազմակերպվել է աշխատաժողով. դասախոսները և ուսանողները հանդես են եկել զեկուցումներով:

Մասնաճյուղում 2018-2019 ուսումնական տարվա ընթացքում իրականացվել են սոցիալական բնույթի ծրագրեր, մասնավորապես՝ տրամադրվել են ուսման վարձի զեղչեր, տարբեր կազմակերպություններից բարձր առաջադիմության կամ սոցիալական ապահովության հիմքերով հատկացվել են կրթաթոշակներ:

Ընդհանուր առմամբ, 2018-2019 թթ. մասնաճյուղի ուսումնական, կազմակերպական, գիտական, վարչատնտեսական ու հանրային գործընթացներն իրականացվել են ՀՊՏՀ կրթական և ուսումնական ծրագրերին, սահմանված ընթացակարգերին ու կանոնակարգերին համապատասխան:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղի ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների**

մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարվածը գնահատել բավարար:

2. **Հանձնարարել մասնաճյուղի տնօրենին՝**
   1) ակտիվացնել համագործակցությունը ՀՊՏՀ համապատասխան ստորաբաժանումների հետ մասնաճյուղի ուսումնական, մեթոդական, կազմակերպական, վարչական ու գիտական գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացման առումով,
   2) ընդլայնել կրթական նորարարական տեխնոլոգիաների ներդրումը ու այդ գործընթացում դասախոսների և ուսանողների մասնակցության ավելի լայն շրջանակների ներառումը,
   3) նպաստել ակադեմիական փոխանակության ծրագրերով արտասահմանյան համալսարաններում ուսանելու հնարավորությունների բարձրացմանը,
   4) իրականացնել աշխատանքներ տեղական ու միջազգային տարբեր կազմակերպությունների հետ համագործակցության և կրթական ու գիտական արդյունքների բարելավման ուղղությամբ:

3. **Սույն որոշումը քննարկել Եղեգնաձորի մասնաճյուղի տնօրինության նիստում և իրականացնել միջոցառումներ նշված հանձնարարականներն իրականացնելու ուղղությամբ:**

4. **Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել պրոռեկտորներ Պ.Ա.Քալանթարյանին և Տ.Ս.Մնացականյանին:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Ա. Հայրապետյան**

2019 թ. ապրիլի 30
Երևան